

ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ ԼԵԶՎԻ ԲՆՈՒՅԹԻ,
ԴԵՐԻ ԵՎ ՆՐԱ ՄՇԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

ՀՍՍՀ ԳԱ քղրակից առնում Ա. Ա. ԱՐԲՆՀԱՄՅԱՆ

Բուռն ու բազմակողմանի էր նալբանդյանի գործունեությունը: Մեծ մտա-
ծողի, հասարակական անձնուրաց գործչի ու քաջամարտիկի տաղանդը փայլա-
տակել է հրապարակախոսության, բանաստեղծության ու գեղարվեստական ար-
ձակի, գրականագիտության ու գրաքննադատության, գիտության այլևայլ
ճյուղերի (տնտեսագիտություն, փիլիսոփայություն, բնագիտություն՝ լայն
առումով) և էլի ուրիշ բնագավառներում: Նրան հետաքրքրած բազմազան
խնդիրների թվում են նաև լեզվի հարցերը, որոնք նա իր սրտին շատ մոտ է
համարել և զբաղվել դրանցով՝ ըստ ժամանակի հրատապ պահանջների:

Նալբանդյանի թանկագին ժառանգության մեջ լեզվաբանականը չափա-
զանց արժեքավոր ու խիստ ուշագրավ է, որը, իհարկե, մինչև այժմ աննկատ
չի մնացել: Նրա գործունեության այդ բնագավառի ուսումնասիրությանը նը-
վիրվել են տարբեր ծավալի ու բնույթի հոդվածներ¹, այլև մենագրություններ²:
Սակայն, ամեն անգամ, երբ առիթը ներկայանում է, չի կարելի չվերաբնորոշել
այն հիմնական դրույթները, որոնք պահպանում են իրենց այժմեականությունը,
ճանաչողական ու գործնական արժեքը, և, բացի դրանից, թեկուզ և փոքրիկ
լրացումները, ինչպես նաև որոշ դեպքերում նորովի մեկնաբանությունները
կարող են օգտակար լինել մեծ մտավորականի ժառանգության ճիշտ յուրաց-
ման ու օգտագործման տեսակետից:

Նալբանդյանի փոթորկալից գործունեությունը համընկավ հայ ժողովրդի
ազգորեն ձևավորվելու պատմական կարևոր ժամանակաշրջանին: Իսկ այդ
պրոցեսում լեզվի հարցերը հանդես էին գալիս առանձին հրատապությամբ:
Նալբանդյանը, կանգնած լինելով ժամանակի հասարակական էական անցու-
դարձերի բուն խառնարանում, իբրև առաջադեմ դադափարների ջահակիր, հե-
ռատես ու խորաթափանց գիտնական, չէր կուրող մեկուսի մնալ շատ հարցերի
հետ ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող լեզվական հար-
ցերից:

Լեզվի բնույթի, դերի ու մշակման վերաբերյալ նրա հայացքներն ամբող-
ջանում են ըստ այն բաղմամբիվ մտքերի, որոնք նա արտահայտել է իր տալբը:

1 Դրանցից առանձնակի հետաքրքրություն ունեն ակադ. Գ. Սևակի «Մ. Նալբանդյանի
լեզվագիտական հայացքների շուրջը» («Սովետական գրականություն», 1941, № 8), ակադ.
Ա. Ղարիբյանի «Մ. Նալբանդյանի լեզվաբանական և լեզվամշակման հայացքները» («Սովե-
տական գրականություն և արվեստ», 1954, № 12), պրոֆ. Ս. Ղազարյանի «Միքայել Նալբանդ-
յանի լեզվաբանական հայացքները» (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1954, № 11) հոդ-
վածները:

2 Հրապարակի վրա են պրոֆ. խ. Ս. Սարգսյանի «Микаел Налбандян и вопросы
языка» (Երևան, 1955) և պրոֆ. Ա. Ս. Մարգարյանի «Մ. Նալբանդյանի լեզվագիտական գոր-
ծունեությունը» (Երևան, 1957) մենագրությունները:

աշխատություններում, ինչպես և նամակներում: Այդ բոլորից զատ, նա ունեցել է լեզվաբանական-հայերենագիտական հատուկ աշխատությունների ըստեղծման ծրագիր:

Ահա թե այդ մասին ինչ է գրել նա բանտից 1863 թ. ապրիլի 8-ին իր եղբայր Ղազարոսին ուղարկած նամակի հավելվածում. «Այժմ մտքումս մի րնդարձակ ծրագիր ունեմ... գրել «Մեր լեզվի արմատական բարեփոխության մի փորձ», շարագրել հին քայքայման և նորի կազմավորման ընթացքը և, ըստ հնարավորության, նոր լեզվի երկու կարևորագույն ճյուղերը հաշտեցնել, միանգամայն հրաժարվելով ժողովրդի՝ այժմ կենդանի լեզվում անգործածելի բոլոր ձևերից, բացառելով. իհարկե, օտար բառերը՝ եթե ժողովուրդը գա՛թածում է առանց կտրիքի և առանց խտրության. շարագրել նոր լեզվի համեմատական քերականությունը՝ ըստ ինձ հայտնի տվյալների, դանազան տարեգրությունների և այն վայրերի հայերի լեզվի, որոնց բարբառները տեղական երանգ ունեն: Դրանից հետո գրել... քերականության փորձ, որպես ձևոնարկ այն բոլոր դպրոցների համար, որտեղ լսվում է հայերեն խոսքը»³: Մի հսկայական ու խիլախ ծրագիր, որը այլ ծրագրերի հետ պիտի իրագործվեր բանտում: Սա առողջությունը կորցրած կալանավորի համար գերմարդկային սխրանք էր: Այդ սխրանքի համար փայլուն տաղանդը և գիտելիքները վիթխարի պաշարը քիչ էին. պետք էին և անօրինակ հաստատականություն, ժողովրդին ծառայելու անձնուրաց նվիրում: Նալբանդյանն իր մեջ համատեղում էր այդ բոլորը: Նա լրիվ չափով իրագործել է այդ հանդուգն ծրագիրը, թե ոչ՝ ստույգ հայտնի չէ (հեղինակը տեղեկացրել է, որ մինչև 1863 թ. հունիսի 6-ը ներածական-տեսական մասից գրել է 15 մամուլ, քերականությունից՝ 2—3 մամուլ): Մեր ձեռքն են հասել միայն ներածական մասից առանձին պատառիկներ ու հատվածներ, որոնք թանկագին մասունքներ են և շատ կարևոր՝ հեղինակի լեզվաբանական ու լեզվամշակման հայացքների ուսումնասիրության տեսակետից: Դատելով ծրագրից, ինչպես նաև մեղ հասած հատվածներից՝ կարող ենք ասել, որ աշխատանքի լրիվ իրագործման դեպքում մենք պիտի ունենայինք երեք մեծարժեք գործ՝ ա) հայոց լեզվի պատմություն՝ հին հայերենի պատմական ներքին տեղաշարժերի ու նոր գրական լեզվի աստիճանական կազմավորման ընթացքի վերհանումով, բացի դրանից, նոր հաստատվող գրական լեզվի մշակման սկզբունքների առաջադրումով ու դրանց կիրառումով, ինչպես նաև աշխարհաբարի երկու ճյուղերի մեթոդական ուղիների նշումով. բ) աշխարհաբարի համեմատական քերականություն՝ ըստ ժամանակի կենդանի բարբառների և ընդհանուր համաժողովրդական լեզվի ու նրա հիմքերի վրա նոր ձևավորվող գրական լեզվի իրականությունների. գ) աշխարհաբար նոր գրական լեզվի նորմատիվ քերականություն, որով այդ լեզվի ուսուցումը պիտի տարվեր դպրոցներում: Ակնհայտ է, որ Նալբանդյանը հետապնդել է թե՛ գիտական-տեսական և թե՛ գործնական-կիրառական նպատակներ: Իսկ այդ նպատակներն էլ իրենց հերթին ունեին հասարակական խոշոր նշանակություն:

Այսպիսի աշխատանքը ժամանակի հրամայական պահանջն էր. ժողովրդի ձեռքը պիտի տրվեին գրքեր, որոնք նրան պիտի կողմնորոշեին իր լեզվի անցյալի ու ներկայի հարցերում. նոր լեզուն պիտի դրվեր մշակման տակ, պիտի

³ Մ. Նալբանդյան, Ծրկերի լիակատար ժողովածու, հատ. 4, Երևան, 1949, էջ 189—190, հմտ. նաև էջ 185—186:

⁴ Հանդես, № 1

ուսուցվեր դպրոցներում հատուկ դասագրքով և ամրանար ու տարածվեր նույն այդ ճանապարհով:

Գարձ ժամանակ անց նման աշխատանքի իրագործման բախտ վիճակվեց Արսեն Այտրնյանին և Ստեփանոս Պալասանյանին:

Այն ամենը, ինչ արտահայտել կամ կատարել է նախնական հայոց լեզվի նկատմամբ, բխել է նրա ընդհանուր աշխարհայացքից և հատկապես մարդկային լեզվի մասին ունեցած նրա ըմբռնումներից: Նախնականի պատկերացմամբ «լեզուն ըստ ինքյան մի աման է, որով մարդը թափում է իր միտքը իր նմանների մտքի մեջ. սա է այն կամուրջը, որի վրայով կարող են ապաստվել ընթացք ստանալ մտքի առևտուրը»⁴: Այսպիսով նախնականը ճշտորեն ընդգծում է լեզվի հասարակական ամենաէական դերը՝ մարդկանց համար նրա հաղորդակցման միջոց լինելը: Մարդն իր նմանների հետ մտքեր է փոխանակում լեզվով: Այդ կարևոր դերով լեզուն նախնականի պատկերավոր որակումով աման, կամուրջ, գործիք («գործարան») կամ հնար է: Մեծ մտածողն ընդհուպ մոտեցել է լեզվի բնույթի նյութականության գաղափարին՝ գտնելով, որ լեզուն իր այդ դերը կատարում է օդի օդնություն (բանավոր դրսևորումով) կամ գրերի միջոցով (գրավոր դրսևորումով): Այսպես. մեկ այլ տեղ կարգում ենք. «Լեզուն չէ՛ր այլ ինչ՝ եթե ոչ գործարան և հնար՝ որով բառական էր մտածողն զխորհուրդս իւր զգալի կացուցանել կամ միջնորդութեամբ օդոյ յունկն ընկերին ազդելով, կամ թէ միջնորդութեամբ գրոյ՝ առաջի առնելով ընթերցանելեացն...»⁵: Սա նախնականի համար թուուցիկ կամ հարևանցիությունն ասված միտք չի եղել, այլ՝ հաստատ համոզմունք, որը արտահայտել է նաև ուրիշ տեղ: Օրինակ, «Ասվում է լսվելու համար» հոգվածում նա գրել է. «Լեզվի պաշտոնը այստեղ այս էր, որ մեր մտքով հասկացածը նա լսելի շինե օդի միջնորդութենով ուրիշներին»⁶: Այս և նախորդ ձևակերպման մեջ, իհարկե, հեղինակը չի մանրամասնել և նշել, որ «օդի միջնորդությունը» հենց հնչյունային դրսևորումն է, որով էլ արտահայտվում է լեզվի նյութական կողմը: Առանց լեզվի այդպիսի բնույթի հնարավոր չէր լինի մտածությունը. մտքերը հասկանալի դարձնել ուրիշներին, իսկ հասկանալի դարձնելու նախապայմանը ահանջին զգալի, այսինքն լսելի դարձնելն է, որը ճշտորեն նշել է նախնականը: Ստորև կտեսնենք նաև, որ նախնականը մեկ այլ առիթով ուղղակիորեն ընդգծել է լեզվի նյութականությունը, այն, որ լեզուն հնչյունների միջոցով ձայնային կերպարանք է տալիս մտքերին: Սրանից էլ տրամաբանորեն բխում է այն դրույթը, ըստ որի լեզուն դիտվում է իբրև «մտքի զգեստ»⁷:

Լեզվի բնույթն ու դերը այսպես ըմբռնած գիտնականը, հասկանալի է, չէր կարող անտեսել կամ շրջանցել լեզվի և մտքի կապի ու փոխհարաբերության հարցը. դրան նա անդրադարձել է բազմիցս, տարբեր առիթներով: Ըստ նախնականի՝ լեզուն մտքի հայտարարն է, նրա ձևը, զգեստը: Այդ դրույթը ներկայացնող ասույթներից հիշենք հետևյալը. «Եվ լեզուն, որ ուրիշ բան չէ, եթե ոչ մտքի հայտարարը, բնականապես պիտի նմանի մտքին, նորա ձևը ուրիշ

⁴ Մ. Նախնական, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, Երևան, 1940, էջ 335:

⁵ Ս. Նախնական, Յաղագս հայկական մատենագրության, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 2, Երևան, 1948, էջ 16:

⁶ Տե՛ս Երկերի լիակատար ժողովածու, հատ. 2, էջ 410:

⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 147:

բան չէ կարող լինել և չպիտի լինի, և թե ոչ մտքի ձևի ցուցումը»⁸։ Լեզվի՝ մտքի հայտարարը լինելու առանձնահատկությամբ է նալբանդյանը բացատրում արտաքին ազդեցություններին ենթարկվելն ու փոփոխվելը։ «Միտքը, որ կյանքի հետ լծակից է,— դրում է Նալբանդյանը,— լեզուն, որ մտքի հայտարարն է, ինչպե՞ս կարող էին ազատ մնալ այն ազդեցությունից»⁹։ Նալբանդյանը համապատասխան անվանումներով սահման չի դնում մտածողության և մտքի միջև, բայց նույն միտք՝ անվանումով հաճախ նկատի է ունենում և մտածողությունը, ինչպես հենց այս ձևակերպման մեջ։

Նկատենք, սակայն, որ մտքի և լեզվի փոխհարաբերության հարցը շոշափելիս նա առաջնությունը տալիս է մտքին՝ այն առումով, որ ըստ նրան լեզուն զործադրվում է մտքի պահանջով։ Այսպես. «...Լեզվի վերաբերությամբ միտքն է բնությունը. լեզվի ձևի վերաբերությամբ մտքի ձևն է բնությունը»¹⁰։ Ըստ Նալբանդյանի՝ մտածողությունն է (իր արտահայտությամբ՝ մտածությունը) կարգավորում խոսքը։ Այդ մասին դեռ նա գրել է իր վաղ շրջանի աշխատություններից մեկում՝ «Յաղագս հայկական մատենագրության» ճառում. «...Լուսաւոր մտածութիւն է որ նախակարգէ գիտսս. նա՛ է, որ տայ կարողութիւն ճանաչելոյ և դատելոյ, մինչ լեզուն իբրև նիւթական մշակ այսր իմացական ներգործութիւն կերպաւորէ զձայն մտախորհութեանն՝ զգալի գործելով լսելեաց և ընթերցանելեաց»¹¹։ Հեղինակն այստեղ միաժամանակ բնութագրում է մտածողությունն ու լեզուն իրենց բնույթով ու էական գործառնություններով. մտածողությունը կանխորոշում է խոսքի կարգավորությունը, իսկ լեզուն՝ ճշտութեան մշակ» է, որը մտածածին հնչյունային կերպարանք է տալիս և այդպիսով զգալի դարձնում լսողներին ու ընթերցողներին։ Այսպիսի փոխհարաբերության մեջ մտքի առաջնության նշումով Նալբանդյանն անդրադառնում է նաև ավելի ուշ՝ «Ասվում է լսվելու համար» հոդվածում։ «Մեր որչափ կարողացել ենք քննել և ճանաչել,— գրել է նա,— հասկացել ենք, որ մարդուս լեզուն այն ժամանակ կարող է խոսել, ինչ ժամանակ միտքը արդեն խոսելի բանը դասավորում է, պատճառ որ խոսքը, որ ձայնավորված լսվում էր օդի մէջ մեր բերանից, մեր իսկ մտքի ծնունդն էր»¹²։ Այս հարցը, մանավանդ ժամանակի լեզվաբանական գիտության մակարդակի պայմաններում, այնքան էլ հստակ լուծելի չէր։ Բայց նրանք, որ ժամանակակից լեզվաբանությունը մատերիալիստական ելակետից առաջնությունը տալիս է լեզվին, որովհետև ընդունում է, որ լեզուն մտածողության հիմք է, մտքերի ձևավորման միջոց։

Նալբանդյանը վերահիշյալների հետ մատնացույց է արել լեզվի մեկ այլ բնորոշ կողմ ևս, որը սերտորեն կապված է նրա մյուս հատկանիշների ու զործառնական կողմերի հետ։ Դա մարդկային փորձի արտացոլման, կուտակման ու պահպանման յուրահատկությունն է։ Նալբանդյանը լեզվի իմացության օգտակարությունը տեսնում է նաև նրա «պահարան գիտելեաց»¹³ լինելու առանձնահատկության մեջ։ Նա լեզվի այդ յուրահատկության հետ է կապում նաև նրա հասկանալիության կարևորությունը, ինչպես. «Բնծ այնքան անհրաժեշտ չէ

8 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 324։

9 Նույն տեղում, էջ 333։

10 Նույն տեղում, էջ 324։

11 ՏՃՍ հատ. 2, էջ 24։

12 Նույն տեղում, էջ 409—410։

13 Հմմտ. «Երկերի լիակատար ժողովածու», հատ. 2, էջ 24։

տեսնել, որ ինձ հետ խոսող մարդը խոսեր այնպես, ինչպես ես եմ խոսում. խնդիրը բացառապես այն է, որ նա հասկանա ինձ: Հասկանալն առաջին քայլն է. ինչ որ ներկա սերունդը կհասկանա, այդ ամբողջով էլ չի կարելի սլոկել հաջորդ սերնդից»¹⁴: Ուրեմն նախորդ սերունդների հանկացածը հաջորդներին է փոխանցվում ու նրանց համար ամրակալվում դարձյալ ու դարձյալ լեզվի շրնորհիվ: Մեր օրերի լեզվաբանությունը սա դիտում է որպես լեզվի ակումուլյատիվ (կուտակիչ) հատկություն:

Լեզուն, ըստ Նալբանդյանի, մարդու կյանքի շտիպողանց անհրաժեշտ ուղեկիցն է, նրա գործունեության և նույնիսկ գոյության կարևորագույն պայմանը: Լեզուն «ծառայում է մարդու բովանդակ կյանքին, բոլոր պետքերին միահամուռ, և ոչ մասնավորապես այս կամ այն հոգեկան ցանկության»¹⁵: Լեզվից պուրկ լինելը մարդու ամենածանր վիճակն է, որը սոսկալի պատուհաս է նրա համար. դա համրի դրությունն է: Ճնշվող մարդու վիճակը, այսինքն մոռնչի արտասովորի վիճակը է ամենամեծ պատուհասը, որին կարող է ենթարկվել մի մարդ»¹⁶: Կույրը, ձեռքից ու ոտքից ընկած անդամալույծը ապավինում են լեզվին, նրանով են մխիթարվում, որովհետև լեզվի միջնորդությամբ կարողանում են իրենց կարիքների մասին հայտնել մերձավորներին, այդպիսով դրանում են օտար աչք, ձեռք ու ոտք¹⁷:

Նալբանդյանի ժամանակներում դեռ նոր էին սկզբնավորվում լեզվաբանական որոշ ուղղություններ ու գաղափարներ, իսկ սոցիոլոգիական ուղղությունն անգամ չէր սաղմնավորվել. այն ձևավորվեց բավական ուշ: Այս մեծ մտածողը, առաջ ընկնելով իր ժամանակից, խորաթափանցորեն կարողացել է դիտել ու նշել լեզվի հասարակական բնույթը «...Լեզուն չէ կարող կազմվել և փոփոխվել մի անհատի կամ խմբի ցանկությամբ և կամքով,— դրել է նա ու շարունակել,— լեզուն որպես ամբողջ ազգի սեփականություն կազմվում է կամ փոխվում նույն իսկ այդ ազգի միջնորդությամբ, որ առանց պատճառի, առանց հարկի, առանց որևիցե ազդեցության ոչ մի խումբ ավելացնում է և ոչ մի խոսք պակասեցնում կամ ալլալում. ալլ լեզվի ամեն շարժողությունը, դեպի որ կողմը և լինի, լինում է որպես հետևանք ներգործող պատճառի...»¹⁸: Շատ բան է ասված. լեզուն ազգի (ժողովրդի) սեփականությունն է և ոչ անհատինը. այն ձևավորվում կամ փոփոխվում է ոչ թե անհատի կամ նեղ խմբի կամքով, նախաձեռնությամբ, այլ ամբողջ հանրության, միջնորդությամբ. առանց անհրաժեշտության ու պատճառի լեզվի մեջ ոչ մի փոփոխություն չի կարող տեղի ունենալ: Եվ այդ ասվածը հնչում է թարմությամբ ու ճշտությամբ:

Քանի որ լեզուն պատկանում է ամբողջ հանրությանը, ընդհանուր է նրա համար, ուստի և որպես հաղորդակցման միջոց գործադրելի է հասարակության ընդհանուր անդամների կողմից, պարտադիր է հասարակության ամեն

¹⁴ Նույն տեղում, հատ. 4, էջ 203, հմմտ. նաև էջ 199: Մեջլերման մեր ընդգծած մասը ե. Շահադիյը իր թարգմանությամբ ներկայացրել է այսպես. «...և ինչ որ արդի սերունդը հասկանա, այն ապագա սերնդի համար մարմին ու արյուն կդառնա» (Գիվան Միքայել Նալբանդյանի, Երևան, 1932, էջ 283): Այս իմաստային թարգմանությունն ավելի ճշգրտուն է բնութագրում լեզվի այն դերը, որի մասին նշվում է վերը:

¹⁵ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 326:

¹⁶ Նույն տեղում, էջ 335:

¹⁷ Տե՛ս նույն տեղում:

¹⁸ Նույն տեղում, էջ 322:

մի անդամի համար, որը և խոսում է այդ լեզվով: Ճնա այնպես միայն կարող է խոսել, ինչպես խոսում է ամբողջ ընկերությունը, որին անդամ է և ինքը խոսողը»¹⁹: Թեև սա ասված է բարբառի կապակցությամբ, բայց հավասարապես վերաբերում է և լեզվին: Այսպիսի ըմբռնումը միանգամայն հարադատ է հեղինակի՝ լեզվի մասին հանդես բերած ընդհանուր հայացքների ոգուն:

Նալբանդյանի լեզվաբանական հայացքների մեջ կենտրոնական տեղ են գրավում այն դրույթները, որոնք վերաբերում են լեզու և հաւատարմություն, լեզու և մառդկային հանրություն խնդրին: Մեծ տեսաբանը գործունեության վաղ շրջանից իսկ նկատել է, որ ազգի (ժողովրդի) գոյության, պահպանման կարևոր գործոններն են լեզուն, պետականությունը և կրոնը: «...Քաջ դիտեմք, — գրել է նա, — և չիք յայսմ տարակոյս, եթէ զկենդանութիւն ազգին պահեն թագաւորութիւն, կրօնն և լեզուն»²⁰: Հեղինակի գիտական ողջ ժառանգության ուսումնասիրությունը պարզորոշ կերպով ցույց է տալիս, որ նա իր նշած այդ երեք գործոններից առանձնակի կարևորություն ու արժեք է վերապահել լեզվին և ժողովրդի (ազգի) կենսական խնդիրների ու հատկապես նրա կազմակերպվելու, ազգորեն ձևավորվելու և առաջադիմելու հարցերի կենտրոնում հետևողական կրթությունը միշտ էլ գրել է լեզվի հարցը: Նալբանդյանի կարծիքով ազգի (ժողովրդի) դեմքը որոշողը լեզուն է: Մի ժողովուրդ մյուսից տարբերվում է սոռաջին հերթին իր լեզվով: Լեզուն մարդկային տվյալ հանրության ներաշխարհային էությունն է: «...Ազգութիւնը ունի յուր հոգին, և այս հոգին լեզուն է: Առանց այս լեզվին չկա ազգ. սուտ բան է և առասպել առակ»²¹: Ազգի գոյատևումը պայմանավորվում է նրա լեզվի գոյությամբ: «...Ոչինչ ազգ չի կորչի, եթե նորա լեզուն պատշաճավոր կերպով ճոխանա, արմատանա և հաստատվի ազգի հոգու և սրտի մեջ: Այսպես ոչինչ ազգ կարող չէ յուր գոյությունը և կյանքը հարատևել, կորուսանելով յուր պատշաճավոր մատենագրությունը և լեզուն: Ազգը ինքն ըստ ինքյան ազգ չէ, եթե չունի լեզուն»²²:

Վերջապահ է լեզվի դիմադրողականությունը: Լեզուն հզոր զինք է այն կրող հանրության համար: Հիանալի է ասել Նալբանդյանը, թե լեզուն է այն սարսափելի ուժը, որի ընդդեմ տկար են նաև միլիոնավոր բարբարոսների սվիննները»²³: Մրա գիտակցումը չափազանց կարևոր էր հայ ժողովրդի համար, որը իր գոյության բազմադարյան պատմության ընթացքում բազմիցս զգացել էր օտար նվաճողներին կուլ զնալու ահավոր վտանգը և մաքսով իր գոյատևման համար:

Նալբանդյանը լեզվի կորուստը մեծագույն թշվառություն էր համարում այն կրող հանրության համար: Ահա թե ի՞նչ է գրել նա «Յաղագս հայկական մատենագրութեան» ճառում. «Եւ գուցէ՞ արդեօք թշուառութիւն ինչ վնաս որ և իցէ ազգիս շարագոյն, քան զկորուստ լեզուի, որ հոգի է ազգի, որ վերջին և միակ հնար է պահելոյ զկենդանութիւն նորա...»²⁴: Այսինքն թե՛ կա՞ արդյոք ազգիս համար որեւէ այլ թշվառություն, վնաս՝ ավելի չար, քան կորուստը լեզվի, որը ազգի հոգին լինելով, նրա գոյության պահպանության վերջին ու միակ

¹⁹ Նույն տեղում, էջ 166:

²⁰ Նույն տեղում, հատ. 2, էջ 42—43:

²¹ Նույն տեղում, էջ 408:

²² Նույն տեղում:

²³ Նույն տեղում, հատ. 3, էջ 334:

²⁴ Նույն տեղում, հատ. 2, էջ 56:

միջոցն է։ Այս ճարտասանական հարցը միաժամանակ ենթադրում է և սլա-տասխանը. դրանից ավելի թշվառություն ու վնաս չկա։ Շարունակության մեջ նալբանդյանը ասելիքը մասնավորում է հայ ժողովրդի նկատմամբ՝ հիշեցնել-լով նրա բազում արհավիրքների ենթարկված անցյալը։

Նալբանդյանի պատկերացմամբ լեզուն ժողովրդի դրոշն է և միաժամանակ նրա վիճակի ցուցադրիչ հայելին. «Լեզուն է ազգությանց դրոշակը, լեզուն է նոցա որպիսության և վիճակի հայտարարը»²⁵։ Այդպիսով լեզուն համասլա-տասխան հանրության զարգացման մակարդակի շափանիչ է։ Այդ մասին նույն տողերի շարունակության մեջ կարդում ենք. «Ձկա աշխարհիս երևաին ազգ, որ բարբարոս լինելով լեզուն լինեի վսեմացած, չկա նույնպես ազգ, որ քաղաքագործվելով բարբարոս լեզու ունենար»²⁶։ Սու նշանակում է, որ քաղա-րակրթությունը իր հետ բերում է և տվյալ ժողովրդի լեզվի մշակում ու զարգա-ցում, և, ընդհակառակն, հետամնացությունն էլ յուրովսանն իր կնիքն է դնում լեզվի վրա։ Ձէ՞ որ, հենց նույն հեղինակի խոստովանությամբ, կյանքը, միտքն ու լեզուն «լծակից» են։

Ժողովուրդն իր բոլոր կողմերով լավագույնս արտացոլում է գտնում իր իսկ լեզվի մեջ, ուստի լեզուն դառնում է նրա ճանաչման հավաստի աղբյուրը՝ ավելի վստահելի, քան պատմական հիշատակարանները։ Այդ մասին Նալբանդյանն իր թեկնածուական ճառում գրել է. «Արեւելյան ժողովուրդների ու նրանց քաղա-քակրթության՝ մեր եվրոպական քաղաքակրթության մոտ՝ պատմությունն իմա-նալու համար ուսումնասիրում են արեւելյան լեզուները այն համոզումով, որ «ժողովրդի հանձարը նրա լեզուն է», նրանով կարող ենք դատել ժողովրդի լու-սավորության աստիճանի, նրա հատկությունների, բարքերի, սովորություննե-րի, արժանիքների ու արատների մասին և այլն, մի խոսքով՝ ժողովրդի լեզվի միջոցով կարող ենք ավելի հավաստուբեմ հանաչել մի ժողովուրդ, քան լեւոս պատմական հիշատակարաններով»²⁷ (ընդգծումը մերն է—Ա. Ա.)։

Լեզվի բնույթի աչպիսի բմբունումը հաստատ հիմք էր տալիս Նալբանդ-յանին լեզուն դիտելու որպես ժողովրդի առաջընթացի, լուսավորության անփո-խարինելի ազդակ ու միջոց։ Այդ մասին նա նույնպես ունի ոչ քիչ թվով ասույթ-ներ։ Հիշենք, օրինակ, այն, որ նա, խոսելով մշակված աշխարհաբար լեզվի անհրաժեշտ գործածության մասին, դա համարում է «գործարան (—գոր-ծիք՝ Ա. Ա.) ազգային լուսավորութեան»²⁸։ Կամ՝ «Մի ազգի լուսավորություն պիտո է կատարվի նորա սեպհական մայրենի լեզվով»²⁹։ Լուսավորությունն էլ համարում է ամբողջ ժողովրդի գործը՝ իր իսկ սեփական լեզվի օգնու-թյամբ։ Այս պատճառով էլ հասարակական մեծ գործիչն ու գիտնականը խիստ չարեորություն է տալիս մայրենի լեզվի ուսուցման գործին։ Նրա կարծիքով հենց դրանով է սկսվում լուսավորությունը։

Լուսավորությանը վերաբերող խնդիրների շարքում է, անշուշտ, ժողովրդի դաստիարակության հարցը։ Իսկ չէր կարող վրիպել Նալբանդյանի աչքից։ Նա աշխտեղ ևս նշում է լեզվի մեծ դերը՝ լեզուն համարելով ժողովրդի դաստիարա-կության գործիք, որի բուն նպատակը ժողովրդի դաստիարակումն է. «...Մեր

25 Նույն տեղում, հատ. 3, էջ 334—335։

26 Նույն տեղում, էջ 335։

27 Նույն տեղում, հատ. 2, էջ 338։

28 Նույն տեղում, էջ 45։

29 Նույն տեղում, էջ 264։

ժողովրդական լեզուն կը ստանա առավել քաղաքացություն և օր ըստ օրե կը մոտենա յուր նպատակին—գեղեցիկ և ընտիր դործիք դառնալու ժողովրդի դաստիարակության համար»³⁰:

Նալբանդյանը, ճշտորեն ըմբռնելով և բնութագրելով լեզվի էությունն ու դերը, միաժամանակ գտնում է, որ այն ինչ-որ քարացած բան չէ, այլ գրտնըվում է անընդհատ զարգացման ու փոփոխության մեջ: Նա այդ մասին հետաքրքրական ու արժեքավոր մտքեր է արտահայտել թե՛ լեզվի ընդհանուր տեսական հարցերը քննելիս և թե՛ փաստական կոնկրետ նյութին անդրադառնալիս: «...Լեզու ենք ասում,—գրել է նա,—որ մի կենդանի, հոսանուտ բան լինելով, համարյա թե ամենայն ընդհանուր փոփոխության և ներգործության տակ է»³¹: Նալբանդյանը, այդպիսի փոփոխության մասին խոսելով, իհարկե, նկատի է ունենում կենդանի լեզուն: Նա, ինչպես ստորև կտեսնենք, ունեցել է և մեռյալ լեզվի գաղափարը, որը, իհարկե, չէր որակի «կենդանի, հոսանուտ բան» (մի դեպքում նկատի ուներ ժամանակի համաժողովրդական խոսակցական լեզուն՝ աշխարհաբարը, մյուս դեպքում՝ գրաբարը): Համանման մեկ այլ ձևակերպմամբ մեջ նա ուղղակիորեն նշում է կենդանի լեզվի փոփոխելիությունը. «...Կենդանի լեզուն հոսանուտ մի բան է և ամեն օր փոփոխության տակ, մենք մեր կարճ կյանքում և մեր արած փորձերից տեսնում ենք նորա հեղափոխությունը»³²: Իհարկե, այստեղ «ամենայն ընդհանուր», «ամեն օր» արտահայտությունները հընչում են որպես մի տեսակ պատկերավոր արտահայտություններ լեզվի ամբողջական համակարգի հանդեպ: Նալբանդյանը շատ լավ է դիտել, որ լեզվական այդ փոփոխությունները որակ են կազմում ու նկատելի դառնում երկար ժամանակի ընթացքում, իբրև տեղականորեն կատարվող տեղաշարժեր: Այդ փոփոխությունները գումարվում ու ներկայանում են որպես լեզվի ներքին շարժման նկատելի հետևանք: Վերը բերված տողերը հեղինակը շարունակում է այսպես. «Ինչո՞ւմ են այդ հեղափոխությունքը մինչև արմատը, ազդո՞ւմ են հասարակ ժողովրդի լեզվի վրա. այդ բանը թեև չէ նշմարվում մի քանի տարում, կամ չէ կարելի առանձին առանձին քննելով գտնել մի մեծ տարբերություն, բայց գումարի պատասխանը ստորաասական է»³³: Աշխարհի զարգացման մասին ունենալով ընդհանրապես ճիշտ հայացք՝ Նալբանդյանը նշում է, որ բնության մեջ ոչինչ չի լինում անփոփոխ, անփոփոխելիության գաղափարը սուտ է, «ինչ որ այդպես չէ, սուտ է»: Իսկ լեզուն իրական է և ոչ թե սուտ և իրական լինելով ենթակա է փոփոխելիության օրենքին: Իրատես մտածողը լեզվի փոփոխությունը բնական ու օրինաչափ է համարում՝ կապելով ընդհանրապես կյանքի ու բնության հետ: Այդ փոփոխությունը նա դիտում է իբրև պատճառներով հիմնավորված երևույթ: Լեզվի փոփոխության համար նա բաղմիցս ընդգծում է պատմության և ժամանակի գործոնները: Եվ հայոց լեզվի պատմական տեղաշարժերի օրինակով դրանք չըմբռնելը և չընդունելը նա որակում է բացարձակ տգիտություն³⁴: Այսօր էլ չի կարելի չընդունել այն գիտական ու առողջ գաղափարը, թե լեզվի դարավոր փոփոխությունները դրդապատճառներ, ազդակներ ունեն և օրինաչափ են: Ծիշտ է, Նալբանդյանը տեղ-տեղ ակնարկում

30 Նույն տեղում, էջ 149:

31 Նույն տեղում, էջ 147:

32 Նույն տեղում, էջ 339:

33 Նույն տեղում:

34 Հմմտ., օրինակ, նույն տեղում, էջ 321—322 և այլն:

է նաև լեզվի, այսպես ասած, քայքայման մասին, բայց ի վերջո և ընդհանուր առմամբ դիտական ընդունելի մոտեցմամբ է բացատրում ու ներկայացնում նրա փոփոխության, սլատմական զարգացման պրոցեսը և դրա արդյունքը։ Ուշագրավ է այն միտքը, թե լեզուն փոփոխվելով ավերածության չի ենթարկվում, այլ փոփոխություններ կրելով իր զերն է կատարում՝ ըստ ժամանակի պահանջի։ Այդ մասին Պոռշյանի «Սոս և Վարդիթեր» վեպի լեզվին անդրադառնալիս նախնադասը գրել է. «Սովորական ոճով խոսելով գործ դրինք ափերանք բառը, ասլա թե ոչ փխտոփաշարար ուղիղ մտածությամբ ոչ դրական կատարելություն կա և ոչ դրական ավերանք մի լեզվի, որ ժամանակների պիտույքին հարմար լցնում էր իր պաշտոնը»³⁵։ Այո՛, լեզվի արժեքը որոշվում է այն հաջող դերով, որ ժամանակի պահանջներին համապատասխան կատարում է նա տվյալ հասարակության համար՝ անկախ նրանից, թե ժամանակին ինչպիսի՞ փոփոխությունների է ենթարկվել։ Չենք ժխտում, որ պրպտելով այս մեծ մտավորականի աշխատությունները՝ լեզվի փոփոխության բնույթի, ինչպես և այլ իրողությունների վերաբերյալ կարելի է և որոշ հակասական մտքեր մատնանշել։ դա հնարավոր էր ոչ միայն դիտականի հայացքների զարգացման ու փոփոխման պատճառով, այլև նրանով, որ նրա՝ լեզվին վերաբերող աշխատությունների հիմնական մասը սեպագրություններ, նախնական տարրերակներ են կամ թերի ու անավարտ են և ոչ լրիվ ավանդված։ Նկատի ունենք հատկապես «Ներածություն»-ը և Պոռշյանի «Սոս և Վարդիթեր» վեպի կրիտիկայի առաջին տարբերակը։ Սակայն էականը դա չէ, այլ՝ մեծ մտածողի միանգամայն առողջ ու դիտական հայացքների ընդհանուր ուղղվածությունն ու հիմնական եզրակացությունները։

Նախնադասի լեզվաբանական հայացքները լեզվաբանական գիտության յգատմության մի օղակն են կազմում, բայց առաջին հերթին եղել են անմոռաց հեղինակի լայն գործունեության ուղենիշներից, որոնցով նա առաջնորդվել է ժողովրդի լեզվական գրության ճանաչման ու զնահատման գործում իր վերաբերմունքն արտահայտելիս, հին և նոր հայերենների հարցերը քննարկելիս, իր ժամանակի համաժողովրդական կենդանի լեզվի մշակման սկզբունքներն առաջադրելիս և, ինչ խոսք, լեզուն իր իսկ գործերում կիրառելիս։ Պարզ է, որ այդ հայացքները ինչ-որ տեղից սլատրաստի վիճակում նրան չեն տրվել, այլ միաժամանակ ձևավորվել են բուռն գործունեության ընթացքում, լեզվական կոնկրետ նյութի հիման վրա՝ իհարկե, կապված նրա ընդհանուր աշխարհայեցողության հետ, ինչպես վերն էլ նշեցինք։

Նախնադասը խորապես ըմբռնել էր սլատմության տրամաբանությունը։ Մթանշելի գիտեր իր ժողովրդի անցյալն ու ներկան, նրա տեղն ու դերը մարդկության ընդհանուր սլատմության մեջ։ Նա որպես լուսամիտ մտածող և գործիչ կողմ էր նորին ու առաջադիմականին և պայքարում էր հանուն նորի հաղթանակի։ Նա ալղպիսին էր և լեզվի խնդրում։ Ըիշտ է, նրա գործունեության շրջանում հարցն արդեն լուծվել էր ժողովրդի կենդանի լեզվի՝ աշխարհարարի օգտին, արդեն հնչել էր մեծ լուսավորիչ խաշատուր Աբովյանի ահեղ ձայնը՝ ընդդեմ հնի և հանուն նորի, բայց հնամոլներն ու ետադիմականները դեռ համառում էին։ Դեռ կային այնպիսիները, որոնք գրականության մեջ նոր լեզվի կիրառումը ծայրահեղորեն համարում էին աղգի համար աղետարեղ գործ։

³⁵ Նույն տեղում, էջ 166։

Իբրև օրինակ նշենք թեևուզ հենց այն դեպքը, որի մասին Նալբանդյանը հիշատակում է «Յաղագս հայկական մատենադրութեան» ճառում: Նա ասում է, թե ինքր երբ առիթ է ունեցել խոսելու ժամանակին այս կամ այն շափով հեղինակություն վայելած մի հնասերի հետ՝ տպացուցելով գրականության մեջ նոր լեզուն կիրառելու և մշակելու անհրաժեշտությունն ու օգտակարությունը, նա պատասխանել է, «թէ ազգն կործանի և չքանայ մինչ ի սպառ, եթէ նորն լեզու լիցի կիրառական ի մատենադրութեան...»³⁶:

Նալբանդյանը ամբողջ ուժով դատապարտում ու տղիտ էր համարում նրանց, ովքեր կառնում էին հնին, չէին ուզում տեսնել կամ զնահատել նորը, առաջադիմականը և նույնիսկ ձգտում էին արգելակել նրա մշակումն ու զարգացումը: «...Ինչ իրավունք որ ունեւ անտիկյան հայր խոսել հին լեզվով, հին ոճով, հին քերականությամբ, նույն իրավունքը իր կարգով ունի և այժմյան հայր խոսել նոր լեզվով, նոր ոճով և նոր քերականությամբ: Մերժել այս իրավունքը համազոր է պատմության և ժամանակի ազդեցությանց տղիտանալ: Բռնաբարել նոր լեզուն, որ նա աճե հին լեզվի ազդեցության տակ, համազոր է պատմության և ժամանակի ազդեցությունը և իրավունքը մերժելու: Մեռածը մեռած է, անցածը՝ անցած, կենդանին և ներկան կենդանի և ներկա ժողովրդի սեփականությունն է, և անխլի՜ սեփականություն»³⁷: Հիանալի է ասված: Անդրամադրելի է անխուսափելին, պատմության և ժամանակի թևադրանքով առաջացածը, պատմական անհրաժեշտությունը: Ժողովրդի նոր լեզուն պատմական անհրաժեշտություն էր՝ անժխտելի ներկայով, մշակման ու զարգացման հեռանկարով: Նալբանդյանը, ոչ միայն լեզվի տեսաբան, այլև պատմաբան լինելով, լավ էր պատկերացնում, որ ժողովրդի այդ նոր լեզուն պատահական կամ հանկարծակի հայտնություն չէր, այլ նրա սաղմերը գալիս էին դարերի խորքից, այն կերպարանավորվել է իբրև արդյունք հայհրենի երկարատև ներքին տեղաշարժերի, պիտի մշակվի ու բարձրանա գրական լեզվի աստիճանի: Նա ուղղակիորեն գրում է, որ ժողովուրդը մշակված ու հասկանալի լեզվով գրականության պահանջ է առաջադրում, «զի գրուածքն մեր լիցին նմա հասկանալի, կիրթ և մաքուր նոր հայախօսութեամբ...»³⁸: Եվ հասկանալի, կիրթ ու մաքուր նոր հայախոսությունը դարձավ ժամանակի լուսաբաղձ գործիչների էական գաղափարը: Հետաքրքրական է, որ Նալբանդյանը այստեղ կարևոր դեր է փերացրում ժողովրդի և այդպիսի լեզվով շարագործ հեղինակների միասնությունը՝ դա համարելով լուսավորության և առաջադիմության կարևոր խթան: «...Հնդինական առանց ժողովրդեան և ժողովուրդն առանց հեղինակի չօրեն ինչ առնել, այլ միացեալ ի կամս և ի հոգի բազում ինչ ի լուսաւորութիւն համազգեաց»³⁹:

Հայ ժողովուրդն ուներ հարուստ, զարգացած և ճկուն հին լեզու, որի գրավոր արտահայտությունը գրաբարն է: Նա լավ է ծառայել մեր ժողովրդին, նրանով ստեղծվել են մշակութային վիթխարի արժեքներ, որոնցով մեր ժողովուրդը աշխարհին ներկայանում է բաց ճակատով: Բայց հին լեզուն պատմության գիրկն է անցել: Նա շատ վաղուց դադարել է կենդանի հաղորդակցման

36 Նույն տեղում, հատ. 2, էջ 58:

37 Նույն տեղում, հատ. 3, էջ 322:

38 Նույն տեղում, հատ. 2, էջ 58:

39 Նույն տեղում էջ 59:

միջոց լինելուց: Գրականության մեջ նրա կիրառումն էլ արդեն անմատչելի է ժողովրդին: Ժողովուրդն իր երբեմնի լեզուն այլևս չի գործածում այն պատճառով, որ իր համար հասկանալի չէ, այլևս չի համապատասխանում նրա մտածողությանը, չի կարող նրա մտքի ձևը լինել: Նախնայանը ոչ միայն արձանագրում է փաստը, այլև գիտական ճիշտ հայեցակետով բացատրում համապատասխան պատճառը: «...Ժողովուրդը թողել է կամ այսպես ասած՝ ապրել, անցկացրել է (пережил) հին լեզվով, հին ձևով իր մտքերը շարադրելու շրջանը և սկսել է գործածել նոր, վայրի, շմշակված ձևը ո՛չ թե նրա համար, որ առաջինը վատ է կամ այլանդակ է նորից կամ լնդհակառակն՝ նորը լավ է և գեղեցիկ է հնից, այլ նրա՝ համար, որ հնացած-անցած ձևերն այլևս չեն համապատասխանում նրա մտքի կառուցվածքին»⁴⁰: Խորաթափանց գիտնականն այլ կերպ չէր կարող դատել, քանի որ, ինչպես վերը տեսանք, նա համոզված էր, որ լեզուն մտքի ձևավորիչն է, նրա ղգիստը, մտքի կազմությունն ու լեզվի կառուցվածքը համապատասխանություն պիտի ունենան: Իսկ դա էլ իր հերթին պայմանավորված է ժամանակով, պատմությամբ և բաղմամբիվ այլ հանգամանքներով: Մենք լեզուն անհամարձեց գնաց, որովհետև հին ժամանակները գնացին, և եթե գնացած չլինեին վաղուց, հին չէր լինեին. ինչ որ մնացել է, նորա պահպանությունը, նորա մշակությունը և նորա ծաղկեցնելը պիտի լինի ամեն խելքը գլխին մարդու գործը»⁴¹: Ուրեմն հին անցումն ընդունելը և պատճառաբանելը դեռ բավական չէին, պետք էր առաջ նայել և գործել նորի օգուտին, որպես և վարվել է նախնայանը: Բայց մինչև այդ խնդրին անցնելը, նշենք, որ նա սոսկ հայ ժողովրդի պատմությունն ու կյանքին հատուկ երևույթ չէր կարող համարել դա: Բաղմակողմանի զարգացում ու բարձր մակարդակի պատրաստություն ունեցող գիտնականը բերում է պատմական ընդունող զուգահեռներ և կողմնակիորեն հաստատում իրողությունն ու արդարացնում իր դիրքորոշումը: Այս տեսակետից հատկանշական է լատիներենի օրինակը, որ բերում է նախնայանը: Իտալացու համար լատիներենը մեռյալ լեզու է: Չի կարելի իտալացուն ստիպել, որ թողնի իր կենդանի լեզուն և խոսի լատիներենով: Չի կարելի ստիպել, որ Ֆլորենցիայի կենդանի լեզվով զրված Մաստվածային կատակերգություն»-ը թարգմանեն լատիներեն և նրանով կարդան: Լատիներենը վաղուց արդեն չի համապատասխանում ժամանակակից իտալացու լեզվամբռածողությանը: Լատինախոսությունը վաղնջական ժամանակներից թաղված է Ֆորումի և Կապիտոլիումի փլատակների տակ: Դժվար է ժամանակակից մարդուն առաջարկել, որ նա խոսի Խորենացու կամ Նդիշեի ոճով ու լեզվով: Դա անհնար է, որովհետև ժամանակակից մարդու գիտակցության մեջ չկան լայպիսի ոճ և լեզու»⁴²:

Նախնայանը, լինելով աշխարհաբարի մեծագույն ջատագով, չի բերագնահատել կամ նսեմացրել հին լեզուն: Նա հիանալիորեն տիրապետել է յրաբարին և իր սկզբնական շրջանի գործերն էլ շարադրել է նրանով: Հետաքրքրական իրողություն է, որ նա զրաբարով է գրել իր փայլուն աշխատություններից մեկը՝ «Յաղագս հայկական մատենագրութեան» ճառը, որը, ինչպես հայտնի է, մեծ շափով նվիրված է աշխարհաբար նոր գրական լեզվի պաշտպանությանը,

⁴⁰ Նույն տեղում, հատ. 4, էջ 201, հմտ. նաև էջ 197:

⁴¹ Նույն տեղում, հատ. 3, էջ 322:

⁴² Հմտ. Նույն տեղում, էջ 327:

նրա մշակման և զարգացման ու այդ լեզվով նոր գրականության ծավալման հարցերին: Ուրեմն՝ զրաբարով հանուն աշխարհաբարի: Նալբանդյանը պատմական հայացք ուներ լեզվի նկատմամբ և այն չէր կարող չգնահատել ըստ պատմական արժեքի ու գերի: Առանձին զուգահեռներից ու ձևակերպումներից երևում է, որ նա ընդունել է այդ լեզվի գեղեցկությունը, հարստությունն ու ձկունությունը և գործնականում էլ օգտվել զրանցից: Բայց այլ բան է իր դարն՝ ասլրածը, թեև հարուստ ու գեղեցիկ, և ուրիշ բան՝ նորն ու անհրաժեշտը:

Աշխարհաբարը նոր էր, անհրաժեշտ իր պատմական նոր դերով ու կարևորությամբ. նրա հիմնավորումն ու զարգացումը ժամանակի համար հրամայական պահանջ էին: Նալբանդյանն այն գնահատում էր՝ ելնելով հենց այս հիմունքներից: Նա իր մոտեցումը պատկերավոր ձևով գրսևորելու նպատակով դիմում էր զուգահեռների: «Գեղեցիկ պատկերի, գեղեցիկ արձանի վրա նայելով կշտանում է մեր հոգու գեղասիրության քաղցը, բայց ոչ պետքերի քաղցը. և ամեն բանից առաջ եթե մենք պետքի քաղցը չկշտացնենք, մեր գոյության հավասարակշիռը կը թեքվի, և այնուհետև ո՛չ Ռաֆայելի Մադոննան կարող է լինել մեր անձը և ո՛չ Բելվեդերյան Ափրոդիտեն»⁴³,— հենց այդ նկատառումով գրել է Նալբանդյանը: Կամ հիշենք այն զուգահեռը, որ նա բերել է իտալական լեզուների վերաբերյալ: Լուկուլիոսը, որ հայտնի էր իր ճոխ ճաշկերպությունով ու խրախուսանքներով և այժմ գրեթե համանուն է որկրամոլության, հաճույքով կմոռանար ընտիր ու համադամ կերակուրները և փառավորապես կուտեր ծովացույի կամ ջրշան յուղը, եթե ընկներ Գրենլանդիայի կամ Լաբրադորի էսկիմոսների մեջ: Կարիքն է որոշողը: Գեղեցկությունը տեղի է տալիս պետքին: Սա է հեղինակի եզրակացությունը⁴⁴: Այսպես պետք է հասկանալ և լեզվի խնդիրը. ժողովրդի լեզվական կարիքը պիտի բավարարեր ժամանակի աշխարհաբարը: Լեզվի հարցում պիտավորը ժողովրդի հաղորդակցական պահանջների բավարարումն է՝ համաձայն նրա կյանքի նոր պայմանների, նոր գաղափարների արտահայտման պահանջի: Իսկ այդ պահանջը կարող էր բավարարվել նոր լեզվի իրականություններով: Իրա համար հիշենք Նալբանդյանի հետևյալ դիտումը. հին լեզվի մեջ «կան բառեր, ձևեր, որ նոր լեզվի մեջ չկան, որովհետև շատ այդպիսիների գաղափարքը պետքերի հետ միասին կորած են և չկան ներկա հայի համար. բայց և նոր լեզուն ունի իր կենդանի և շարժուն ձևերը ու ոճերը, որպես ներկա գաղափարների և պետքերի հայտարար, որ հնումը չկան»⁴⁵: Ուրեմն՝ ասպարեզը պիտի պատկաներ նորին:

Խնդրի ողջ հրատապության խոր դիտակցումով, բաղաբացիական բուն կրթով Նալբանդյանը նվիրվում է ժողովրդի նոր լեզվի իրավունքների պաշտպանությանը: «Արդեն քանի մի տարի է, որ թե՛ ուրիշները և թե՛ մենք առիթ ունեցած ենք հայկական ժողովրդական լեզվի իրավունքը պաշտպանելու»,— այսպես է սկսել նա իր ծրագրած լեզվաբանական երկի «Ներածություն» մեղ հասած առաջին հատվածը⁴⁶: Իվ, իրոք, նրա թե՛ գործը և թե՛ ողջ կյանքը դրա վառ ասպարեզն են: Հայտնի է, որ Լադարյան ճեմարանում նա դասավանդել է աշխարհաբար⁴⁷: Այդ փաստը հենց աշխարհաբարի գործնական պաշտպան-

43 Նույն տեղում, էջ 325:

44 Տե՛ս նույն տեղում, էջ 325—326:

45 Նույն տեղում, էջ 329:

46 Նույն տեղում, էջ 321:

47 Հմմտ. «Հայ նոր գրականության պատմություն», Երևան, 1962, էջ 155:

նություն էր 24 տարին դեռ չբոլորած խանդավառ ուսուցչի կողմից: Դրանով ոչ միայն նա նոր լեզվի կառուցվածքային իրողություններն էր բացատրում և ուսուցանում իր աշակերտներին, այլև արմատավորում էր նրանց մեջ լեզուն, արժնացնում ճաշակ և սեր նրա հանդեպ, մշակում նրանց խոսքը:

Այստեղից հատուկ նպատակաուղղվածությամբ վերընթաց գծով շարունակվում է նրա արդյունավետ գործը: 1857 թ. նա հրապարակ է հանում էժեն Սյուի «Թափառական հրեա» հանրահռչակ վեպի աշխարհաբար թարգմանությունը, որին կցված առաջաբանում կարևոր է համարել նշել, որ թարգմանությունը կատարել է ժողովրդին հասկանալի լեզվով⁴⁸ հաշվի առնելով այդպիսի գործերի պակասը: Նա միաժամանակ ցավով է նկատել, որ շատ քչերն են համստանում գրաբար մատենագրությունից՝ լեզվի անմասնաշեղծության պատճառով. և հայ մարդիկ իրենց սեփական մատենագրության նմուշները կարդում են օտար լեզուներով⁴⁹:

Այնուհետև նվիրված գործիչը աշխարհաբարի օգտին կատարվող յուրաքանչյուր քայլի արձագանքում է գոհունակությամբ և խրախուսում իրեն հատուկ կրքոտությամբ: Բնորոշ փաստ է, օրինակ, Ստ. Նավարյանցի «Հանդես նոր հայախոսության» երկհատոր գործի գրախոսումը: Այդ երկու հատորների լույս աշխարհ գալը թարմ ու կարևոր երևույթ էր տվյալ ժամանակի համար: Ժողովրդին էր հանձնվում նոր մշակվող գրական լեզվով ընթերցանության գիրք, որը կոչված էր տարածելու և հիմնավորելու նոր հայախոսությունը: Նալբանդյանը բարձր է գնահատում նրա կատարելիք հասարակական դերը և գովում նրա լեզուն որպես մի առաջընթաց քայլ հեղինակի նախորդ երկերի լեզվի համեմատությամբ: «Լեզուն, որով գրված է այդ գիրքը, առավել ճոխ է, առավել հարուստ և առավել մոտ կենդանի ժողովրդի բարբառին, քան թե հեղինակի այլ գրվածքը մինչև այսօր. և այս լեզվի օր ըստ օրե ավելի մեծ քայլերովը առաջ գնալը բացահայտ է արդեն...»⁵⁰, — գոհունակությամբ արձանագրում է նա: Դրանով Նալբանդյանը միաժամանակ նշում է մշակվող աշխարհաբար գրական լեզվի առաջընթացը: Նա մեծ ցնծություն է ապրում՝ նկատելով նոր գրական լեզվի հաստատ կերպարանավորման պատմական փաստը, որով և պայմանավորված էր նոր գրականության զարգացումը. «Մենք մեր կողմից, որպես ազգի օգտին ճշմարտապես ցանկացող, անպատմելի ուրախ ենք, որ ժողովրդական լեզուն ձեռք ու ոտք է ստացել, և մեր մատենագրության աղքատիկ գանձարանի մեջ երևում է մտավորական և կենսական շարժողություն»⁵¹:

Հանուն աշխարհաբար նոր գրական լեզվի Նալբանդյանի ծավալած գործունեությունը հայտնի է և հյուսիսափայլյան տարիներից: Երգվյալ գործիչը այդ ուղղությամբ շի դադարում աշխատել և բանտում՝ ոչ միայն այնտեղ իր մշակած (վերը հիշատակված) ծրագրի համաձայն, այլև «Սոս և Վարդիթեր»-ի հռչակավոր կրիտիկան գրելիս և նույնիսկ բանտային նամակների սուղ լեզերը շարադրելիս:

Նալբանդյանը բազմիցս արձանագրում է, որ նոր լեզուն իր ժամանակի մեջ ունի իր իրավունքը: Որպես օրինակ հիշենք հետևյալ ձևակերպումը. «Լավ

48 Տե՛ս Մ. Նալբանդյան, երկերի լիակատար ժողովածու, հատ. 2, էջ 61:

49 Տե՛ս նույն տեղում, էջ 64:

50 Նույն տեղում, էջ 148:

51 Նույն տեղում, էջ 149:

է թե վատ, դա այլ հարց է, բայց փաստն այն է, որ նա, որպես ժամանակի լեզու, այնպիսի լիակատար և անձեռնմխելի իրավունք ունի, ինչպես ուներ նրան նախորդած հին լեզուն»⁵²։ Սա հաջորդում է հեղինակի այն ճիշտ մտքին, թե լեզուն ժամանակի արգասիք է և մշակվում է ժողովրդի ըմբռնումների ու քաղաքակրթության համեմատ։

Նալբանդյանը հատուկ կարևորություն էր տալիս աշխարհաբարի, որպես մի ինքնուրույն լեզվի ճանաչմանը՝ գրելով. «Նոր լեզուն բոլորովին կկուցնի իր խորհուրդը, և թե նա չպետք է դիտվի ինքնուրույնաբար»⁵³։ Նալբանդյանը թե՛ տեսականորեն և թե՛ գործնականորեն այդ նոր լեզվին մոտենում է հենց այդպիսի պատկերացմամբ։ Նա ընդունում է, որ այդ լեզուն իր ներքին կազմվածքով ամբողջական է և տարբեր հնից։ Այդ նրկուսի կառուցվածքային էական տարբերության մասին նա այսպես է արտահայտվում. «Նոր լեզվի հնից գլխավոր և հիմնական տարբերությունը էսպես հիմնված է բանի կազմության վրա, բաղդասության և ձևի վրա»⁵⁴։ Այստեղ քաղղասությունը եզրույթով նալբանդյանը (ուրիշներն էլ) նկատի ունի շարահյուսությունը, իսկ ձև-ով նշում է ձևաբանությունը, թեև այլ դեպքում վերջինս համարում է ձևի օբեկտ։ Նա ճիշտ է նկատել, որ լեզվի մեջ որոշողը նրա ներքին կառուցվածքային առանձնահատկություններն են, իհարկե, առաջին հերթին՝ քերականական կառուցվածքը։ Իսկ նոր հայերենն ունի իր այդպիսի կառուցվածքը։ Նա սուր դիտողականությամբ նկատել է նոր լեզվին բնորոշ իրականությունները (խոնարհում, հոլովում, նախադասության կառուցվածքի իրողություններ և այլն) և դիպուկ բնութագրումներ տվել։ Նրա նուրբ դիտումների արդյունքն է մեր նոր լեզվի և այսպիսի բնութագրումը. «Եվ առողջ աչքով նայողը կտեսնի, որ նոր լեզվի մեջ ժամանակի խնայողությունը, առողջանության ներդաշնակությունը և արտաբերության հեշտությունը մեծ քայլափոխ են արել»⁵⁵։

Բազմիցս խոսելով նոր լեզվի բարեմասնությունների մասին՝ իրատես գիտնականն այնուամենայնիվ գրել է, որ «սա հին լեզվի և հարյուրում մասի չափ էլ մշակված ու գործածված չէ»⁵⁶։ Նա, շարունակելով իր խոսքը, ուղղակիորեն խոստովանում է, որ այդ լեզվի մեջ առկա են թերություններ, և զարմանալի կլինեն, որ դրանք չլինեին, քանի որ լեզուն մինչև այդ գրի տակ չի ընկել, չի մշակվել։ Բացի դրանից, նա իրավացիորեն նկատել է, որ արտաքին նվաճողների արշավանքների հետևանքով լեզուն ենթարկվել է և աննպաստ ազդեցությունների։ Պատկերավոր արտահայտվելով՝ հիշեցնում է, որ Սարգիս Բուխարացու գերեզմանի նման ամեն անցորդ քար է նետել այնտեղ։ Լեզուն, հսկողության տակ չլինելով, տուժել է։ Ահա այստեղից էլ տրամաբանորեն հետևում էր նոր լեզվի մշակման խնդիրը, որին Նալբանդյանը նույնպես մեծ նշանակություն է տվել։ Այս խնդրում նրա հայացքների խտացումը կարելի է գտնել հետևյալ տողերում. «Անշուշտ, այս խոսքերը չեն նշանակում, թե հին

⁵² Նույն տեղում, հատ. 4, էջ 195, հմտ. նաև էջ 192։ Նկատելով, որ նամակի թարգմանությունն մեջ անճշտություն կա, ուղղել ենք։

⁵³ Նույն տեղում, էջ 201, հմտ. նաև էջ 197. մենք СМЯСЛ-ի դիմաց պահեցինք խորհուրդ բառը, ինչպես և թարգմանել է Ե. Շահազիզը («Դիվան», էջ 280)։ Դա ավելի ճիշտ է արտահայտում Նալբանդյանի միտքը։

⁵⁴ Նույն տեղում, հատ. 3, էջ 211։

⁵⁵ Նույն տեղում, էջ 208։

⁵⁶ Նույն տեղում, էջ 328։

լեզվի լծից ազատելով նոր լեզվի մշակությունը դնել այս կամ այն գավառական բարբառի լծի տակ: Տեղական բարբառը ազգի ընդհանուր համար գործնական արժեք չունի և նոր լեզուն այս կամ այն գավառական բարբառի տակ, գրականապես, մշակելու գաղափարը նույնպես ամուլ և անգործադրելի է, ինչպես հին լեզվի գաղափարը, ինչպես սուրա ստրկության տակ տնած նոր լեզվի գաղափարը: Այս տեսակ մշակությունը ինքն իրեն հակասում է նոր լեզվի մշակության գաղափարին, որ է ուրբան կաբելի է առավել շատ և առավել մեծ բազմության հասկանալի կերպով խոսել: Այս պատճառներով նոր լեզուն պիտի նաչվի և մշակվի ինքնուրույնորաբար, առանց ամենևին հին լեզվից խոսնելու և առանց այս կամ այն գավառական բարբառին ստրկանալու: Բոլոր գավառական բարբառների էական տարբերք, որ իրենց ձևով և կազմությամբ ավելի ընդունակ են կենդանի-ընդհանրության լեզվի վրա պատվաստվելու, պիտի ընկնեն ճարտարապետ հեղինակների քուրացի մեջ և այնտեղ հալվելով քիմիաբար (ֆիզիկաբար ո՞չ) միանալով պիտի դուրս գան ոչ որպես թլպատություն կամ անթլպատություն, այլ որպես նոր արարած⁵⁷: Այստեղ արտահայտված մտքերս միաժամանակ ներկայացնում էին լեզվամշակման որոշակի սկզբունքներ և ինքնին ծրագրային նշանակություն ունեին: Ըստ այդմ՝ նոր գրական լեզուն պիտի դիտվեր ինքնուրույն իրավունքներով և մշակվեր ինքնուրույնաբար, հնից ազատվելով չպիտի կախումս մեջ դրվեր տեղական որևէ բարբառից: Մշակումը պիտի տարվեր առանց հին լեզվից քաշվելու և տեղական բարբառների պիտանի կենսական տարրերի օգտագործումով. սրանք զբաղոր ճանապարհով պիտի հղկվեին, մշակվեին որակապես և վարպետությամբ մերվեին ընդհանուր գրական լեզվին: Առաջնորդող հիմնական գաղափարը պիտի լիներ «ուրբան կաբելի է առավել շատ և առավել մեծ բազմության հասկանալի կերպով խոսել»⁵⁸. և սա ընդգծել է ինքը՝ հեղինակը: Սրա արամբաճական վարդապետը գտնում ենք հեղինակի 1863 թ. ապրիլի 14-ի նամակում, որտեղ ասված է. «...լեզվի մշակման առաջին խնդիրն այն է, որպեսզի նա հասնի գլուրահասկանալի բարոյական գործիքի աստիճանին, որպեսզի նա քիչ թի շատ բանիմաց գավառացուն մատչելի լինի, և դրանով դիտության համար գլուրանցանելի ուղի բանալ, առանց որի ամեն մի լուսավորություն և ամեն մի ազատագրում (освобождение) անիմաստ է»⁵⁹: Իրոք, լեզվի մշակման գործի հասարակական մեծ նշանակությունն ըմբռնված է ամբողջ խորությամբ, ժողովրդական լայն գանգվածներին մատչելի լեզուն կրկին ու կրկին դիտված է լուսավորության, ազատագրման բարոյական գործիք: Ուստի պետք էր ձգտել նոր լեզուն այդպիսի աստիճանի հասցնել՝ նրա ճիշտ մշակման ճանապարհով:

Նոր գրական լեզվի մշակման գործում նախանշյալներ ճիշտ է դիրքորոշվել մի կողմից հին լեզվի, մյուս կողմից՝ բարբառների հանդեպ: Նա հին լեզվից չքաշվելու գաղափարի նշումից պատ շատ դեպքերում զգուշացրել է նրա ոգուն չստրկանալու մասին⁶⁰, Չի կարելի առանց ունենդրելու ժողովրդի ձայնին նոր լեզվի կենսունակ ծիլերը կաշկանդել հնով ու մեռածով, այլ պետք է նպաստել նրանց վարդապետանքի նախանշյալներ քաջածանոթ էր հայերենի տե-

⁵⁷ Նույն տեղում, էջ 197—198:

⁵⁸ Նույն տեղում, հատ. 4, էջ 202, հմմտ. նաև էջ 198—199:

⁵⁹ Հմմտ., օրինակ, Նույն տեղում, հատ. 3, էջ 197, 321 և այլն:

դական շատ բարբառների: Դա երևում է ոչ միայն նրա ընդհանուր դատողություններից, բնութագրումներից, ակնարկներից, այլև որոշ գեպերում բարբառային իրակությունների օրինակների նշումից: Տեղի սղությունը մեզ հնարավորություն չի տալիս հանգամանորեն կանգ առնելու դրանց վրա: Միայն նմուշի համար հիշենք նրա նույր գիտողությունը արարատյան բարբառի խոսվածքների վերաբերյալ: «Սոս և Վարդիթեր»-ի կրիտիկայի տողատակի մի ծանոթության մեջ նա նշում է, որ այդ բարբառի խոսվածքները ունեն տարբերություններ: Այդ տեսակետից ծայրաթևերն են Քանաբերի և Աշտարակի խոսվածքները, միջին դիրք են զբաղում Երևանն ու Վաղարշապատը: Անցումն աստիճանական է՝ Քանաբերից Երևան, այստեղից Վաղարշապատ և սրանից էլ՝ Աշտարակ: Այս շղթան մի ամբողջություն է, բայց երբ առանձնացնում ենք նրա մի օղակը, տարբերությունն աչքի է զարնում: Այս աղավորությունը Նալբանդյանը ստացել է ոչ միայն Արուսյանի և Պետրոսյանի հայտնի վեպերի լեզվից, այլև բարբառի իր սեփական գիտարկումներից⁶⁰: Չէ՞ որ նա Հնդկաստան մեկնելուց առաջ անհրաժեշտ փաստաթղթեր վավերացնելու նպատակով եկել էր Անդրկովկաս և բավական ժամանակ մնացել Վաղարշապատում, շրջագայել: Հասկանալի է, որ նրա տեսողաշարից չէին կարող դուրս մնալ տեղի խոսվածքները:

Բարբառների օգտագործման հարցում Նալբանդյանն ունեցել է հայացքների զարգացում: Հայտնի է, որ անցյալ դարի հիսնական թվականներին հայ մշակութային գործիչներից ոմանք ունեին նոր լեզվի հիմքում այս կամ այն բարբառը դնելու կամ լեզուն մշակելու համար որևէ մեկ բարբառի վրա հենվելու մտայնություն, ամատնացույց էին անում այդպիսի բարբառ: Նալբանդյանը ևս այդպիսի տեսակետ է ունեցել, բայց շուտով վերանայել է այդ ու հրաժարվել մեկ բարբառին առաջնություն տալու գաղափարից: Այս առումով բնորոշ է, օրինակ, նրա վերաբերմունքը Գ. Ախվերդյանի՝ Տարոնի բարբառին նախապատվություն տալու տեսակետի նկատմամբ, այլև այն, որ խոստովանել է, թե ինքը մի ժամանակ քիչ թե շատ հետևել է բարբառի օգտագործման այն գաղափարին, որ հետո զովարանվում էր «Կոունկ»-ում: Այս մասին նա գրել է 1863 թ. ապրիլի 14-ի նամակում: Նալբանդյանը տեսնում էր, որ աշխարհարար համաժողովրդական լեզուն արդեն կա, ուստի պետք չէր որոնել որևէ բարբառ և դարձնել այդպիսի լեզու: Խնդիրը արդեն զոյություն ունեցողի մշակումն էր, այն գրական լեզվի աստիճանին բարձրացնելու համար զարգացման ճիշտ հունով տանելը: Ես այն համոզմունքն է արտահայտել, որ մեկ գավառաբարբառը յուրահատուկ է տվյալ գավառին, ուստի և նույնությամբ չի կարող ծառայել ամբողջ ժողովրդին, «...որովհետև արդյունք և սեփականություն է որևէ տվյալ գավառի»⁶¹: Դրա համար էլ մեծ լեզվաշինարարը առաջ էր քաշում ԲՈՒՐԲԱՐԲԱՐԱՆՆԵՐԻ կենսունակ տարրերի օգտագործման խնդիրը: Նա կրկնում ու պրնդում էր, որ մինչև բոլոր կենդանի բարբառներից ճանապարհներ չբացվեն դեպի նոր գրական լեզվի կենտրոնը, սա ոչ միայն չի կարող ծաղկել, ուժ ստանալ և դրանով իսկ ընդհանուր հասարակական արժեք ունենալ ժողովրդի համար, այլ կամ կսահմանափակվի ու կենթարկվի միայն մի գավառի, «կամ շորացած, սատկած, ամուլ և անպատու կը մնա»: Երկու դեպքում էլ ժողովրդի հա-

⁶⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 196, ծան.

⁶¹ Տե՛ս նույն տեղում, հատ. 4, էջ 202:

մար կկորցնի հասարակական արժեքը, կլինի «չեղածի պես, իսկ ինքը ազգը՝ կենդանի-գրական լեզվի կարոտ»⁶²։ Իսկ որո՞նք էին, նրա կարծիքով, բարբառների օգտագործելի տարրերը։ Այգ մասին վերը հիշատակված իր նամակում գրել է. «Ինձ համար այժմ կարևորություն չունի, թե ո՞ր բարբառով այժմ ավելի նրբագեղ են խոսում, այսինքն՝ ավելի մոտ հին ձևերին. ես փնտրում եմ ուրիշ բան, թե որ բարբառում ավելի շատ են նուր լեզվի մշակված, կենդանի ձևերը»⁶³։ Բարբառային նյութի օգտագործման խնդրում բարբառների միջև խտրությունն ղենլը, արհամարհանք կամ տղայական վերաբերմունք հանդես բերելը նա լեզվի մշակման եւ ղարգացման համար համարում է վնասակար և շեշտում, որ արժեքավոր բառեր ու ձևեր կերպարանել ու մշակել են և՛ արարատյան հայը, և՛ մշնցին, և՛ վաննցին, «...Շատ հոյակապ և հեշտ պատվաստող բառեր և ձևեր կան այս ու այն տեղ, նաև շատ փոքր հասարակությանց մեջ, պետք է այդ բոլորից էլ օգուտ քաղել խնամով և շրջանկատ ընտրությամբ»⁶⁴։ Շատ հետաքրքրական է նալբանդանի այն մոտեցումը, թե երբ որևէ բարբառում գրտնրվում է մտքի արտահայտման հաջող ձև, այն պետք է օգտագործել ոչ թե պաշտոնական պարտադրումով, այլ «մաքսանենգաբար», աննկատ, որ հակադեցություն չառաջանա»⁶⁵։

«Խնամով և շրջանկատ ընտրությունը» եղել է նալբանդանի լեզվաշինական գործունեության կարևոր սկզբունքներից։ Լեզվամշակության նվիրյալը միաժամանակ գտնում էր, որ լեզուն մշակելիս չպետք է դիպչել նրա համակարգին, ամբողջական կազմվածքին, հատկապես քերականական կառուցվածքին, որը, ինչպես վերը նշեցինք, նա համարում էր լեզվի դեմքը որոշողը։ Ուստի կամայականորեն չի կարելի նրան պարտադրել դրան անհարիր, խորթ ձևեր, այլ մշակման ամեն մի քայլ պիտի կատարվի նրա ոգուն և ներքին օրինաչափություններին համապատասխան։ Այս կողմից շատ բնորոշ են նրա դիտողությունները «Սոս և Վարդիթեր» վեպի առթիվ։ Օրինակ, ինչո՞ւ էր նա մերժում անորոշ դերբայի հոլովումը ու հոլովմամբ, ինչպես՝ կենդանացնելոյ, գրելոյ, կանգնելոյ, նստելոյ և այլն, փոխանակ՝ կենդանացնելու, գրելու, կանգնելու, նստելու։ Նալբանդանը նկատել է, որ վեպի հեղինակը շեղվել է ժողովրդի գործածած հանրական ձևից, ընդհանուր կանոնից, ստրկացել է հնի կիղնին, որը խորթ է նոր լեզվի ոգուն։ Ուրեմն պետք էր հետևել լեզվի կենդանի ու ընդհանրացած օրենքին։ Կամ ինչո՞ւ էր մատնանշում որոշ հարադրական բայերի անվանական բաղադրիչների մոտ ի նախդիրի գործածության դեպքերը, ինչպես՝ ի գործ ղնել, ի մեջ բերել, ի լոյս հանել։ Նա շատ լավ գիտեր, որ նախդիրի այդպիսի գործածությունը գրաբարի օրենքն է։ Նոր լեզուն նման դեպքերում անտեսում է նախդիրը (գործ ղնել, մեջ բերել, լոյս հանել և այլն)⁶⁶։ Նույնը վերաբերում է և նախադասության կառուցվածքին։ Հատկանշական է այն դիտողությունը, որ Պռոշյանը մի տեղ հատկացուցիչը ետադաս է գործածել՝ «այս է կարգը կանգնելոյ»։ Դա հատուկ է հին լեզվին, բայց հակառակ է նորին⁶⁷ և այլն։

⁶² Նույն տեղում, հատ. 3, էջ 214։

⁶³ Նույն տեղում, հատ. 4, էջ 201 (ընդգծումը մերն է—Ա. Ա.)։

⁶⁴ Նույն տեղում, հատ. 3, էջ 213։

⁶⁵ Տե՛ս նույն տեղում, հատ. 4, էջ 201—202։

⁶⁶ Տե՛ս նույն տեղում, հատ. 3, էջ 199—200։

⁶⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 200։

Լեզվի մշակման գործում նալբանդյանը իր տեսադաշտից դուրս չի թողնում նաև բառապաշարի հարցը։ Նա լեզվի զարգացածությունը և հարստությունը որոշում է բառերով։ «Մտքի գույները ցուացնողքը բառերն են»,—գրում է նա և ավելացնում. «Լեզվի հարստությունը բառերով է, նոքա են այն ամանները, որոնց միջնորդությամբ մեր միտքը հասնում է ուրիշին»⁶⁸։ Պարզ է, որ այսպիսի պատկերացմամբ պիտի մոտենար բառերի ընդգրկմանն ու գործածությունը։ Նա բացառում է լեզվի մեջ մաթեմատիկական ճշտությամբ և բացարձակապես նույնիմաստ բառերի գոյությունը։ Գտնում է, որ զանազան հասկացություններ արտահայտելու համար պետք է ընտրել համապատասխան բառեր կենդանի բարբառներից, հին լեզվից, այլև ուրիշ լեզուներից։ Այս խրնդրի հաջողության համար լեզվաշինարարը հեղինակներին ու ժողովրդին համապատասխան դեր ու պարտականություն է վերապահում։ Հեղինակը պարտավոր է ժողովրդի լեզվի քերականական կառուցվածքին հավատարիմ մնալ և բարբառներից, հին լեզվից կամ օտար լեզուներից վերցված բառերը կապակցել ու կիրառել ժողովրդին հայտնի օրենքներով, իսկ ժողովրդի պարտականությունն է հեղինակի այդ շարադրածը ուշադրությամբ կարդալ և չհասկացած բառի նշանակությունը սովորել իմացողի կամ բառարանի միջոցով⁶⁹։

Լեզվի մշակության հարցերը բարձրացնելով՝ Նալբանդյանը հասկանալիության հետ ձգտում էր նրա համակողմանի պիտանիությանը, լիարժեքությանն ու լիարժեքությանը։ Նա դեմ էր կոկիկ, սահուն, բայց անարյուն և հարմարեցված նախադասություններով շարադրանքին⁷⁰։

Նալբանդյանի մոտեցմամբ լեզվամշակությունը հասցվում էր նորմավորման, որը մշակման բարձրագույն աստիճանն է։ Այս տեսանկյունից Նալբանդյանը խիստ կարևոր է համարել գրողների լեզվի նորմավորվածությունը։ Նա այն միտքն է հայտնել, թե առանց որոշակի կանոնի ու համակարգվածության շարադրողի լեզուն կդառնա մի մածնաբրդոշ։ Եթե գրվածքում ձևերի կաշույնացում չկա, կամ եթե եղածները խառնիխուռն և հեղհեղուկ են, ժողովուրդը չի կարող օրինակ վերցնել⁷¹։ Պետք է նորմավորել հանուն ժողովրդի։ Նալբանդյանը միասնական մոտեցման կոչ է անում՝ մշակման մեջ մեծ տեղ տալով կանոնին ու նրա միասնական տարածմանը։ Իսկ դա կարող է լինել այդ գործով զբաղվողների միասնական ջանքերով։ Դիտողություններ անելով լեզվական առանձին ձևերի մասին՝ նա եզրակացնում է, որ «բանը շատի ու քչի վրա չէ, այլ կանոնի վրա, ուստի հարկավոր է, որ լեզվի վրա աշխատողքը իրենց մշակության արդյունքը և իրենց նկատողությունքը հայտնեն միմյանց, որ այս հասարակաց փոխադարձ գործակցությամբ լեզվի գործը առաջ երթա»⁷²։ Պարզ է, որ նորմավորումն էլ որպես մշակման բարձր աստիճան իր հերթին պիտի բխեր լեզվի ներքին օրինաչափություններից։

Նալբանդյանը շոշափել է նաև հեղինակների շարադրման ոճի հարցը՝ հորդորելով նրանց իջնել «վսեմ լեզվի» պատվանդանից հասարակ ժողովրդի մեջ և մոտենալ ժողովրդի համար ընդունելի կանոնավոր գրական լեզվի դիրքերին։

68 Նույն տեղում, էջ 213։

69 Տե՛ս նույն տեղում, էջ 212։

70 Հմմտ., օրինակ, նույն տեղում, հատ. 4, էջ 194։

71 Տե՛ս նույն տեղում, հատ. 3, էջ 208։

72 Նույն տեղում, էջ 202։

Նա ճշտորեն մատնացույց է արել լեզվի մշակման, նորմավորման, տարածման ու ամրապնդման միջոցները: Այդ նպատակով առաջարկում էր ոչ միայն դարկ տալ նոր գրական լեզվով ծավալվող գրականությանը, այլև «տեղծել այդ լեզվի համար քերականության ձեռնարկ, գլոսներում ընդհանրապես ուսուցումը տանել գրական աշխարհաբարով և հենց դա էլ դարձնել ուսումնական հատուկ առարկա: Եվ, իրոք, այդ մեծ երախտագործը ոչ միայն եղավ այս վեհ գաղափարների արտահայտիչը՝ որպես տեսաբան-գործնական, այլև՝ գրանց բուն իսկ կիրառողը՝ որպես մեծ ուսուցիչ, գրող ու հասարակական գործիչ:

ВЗГЛЯДЫ МИКАЕЛА НАЛБАНДЯНА НА ПРИРОДУ, РОЛЬ И ОБРАБОТКУ ЯЗЫКА

Член-корр. АН АрмССР А. А. АБРААМЯН

(Резюме)

В многостороннем наследии Микаела Налбандяна особое место занимают его мысли о языке. Проблемы языка были очень актуальными в период бурной деятельности выдающегося мыслителя-революционера—в период формирования армянского народа как нации. После победы ашхарабара его литературная обработка стала исторической необходимостью. Большой вклад в это дело внесли прогрессивные деятели того времени, ведущим из которых был Налбандян. Он рассматривал язык как материальное средство человеческого общения, как оформляющее мысли мощное орудие борьбы, просвещения, воспитания и прогресса народа. Язык, по Налбандяну,—это душа народа, без него народ не может существовать. Выдвигая тезисы об обработке нового литературного языка, Налбандян одновременно своими произведениями показывал блестящий пример такой обработки.